№ 184 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22 1901 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22 № 184

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ցիշատակելի օրվայ առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սիօնիստների ժողովը. Նամակ Բագուից. Նամակ Աբասթումանից. Նամակ Շուլավերից. Նամակ Սղնախից. Նամակ Խըզբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սիօնիզմ։

ՑԻՇԱՏԱԿԵԼԻ ՕՐՎԱՑ ԱՌԻԹՈՎ

—

Առաջիկայ կիրակի օր, օգոստոսի 26-ին, լրանում է Մխիթարեան միաբանութեան հիմնադրութեան երկհարիւրամեակը։ Վենետիկի սուրբ Ղազարի վանքը պատրաստվել է հանդիսաւոր կերպով տօնելու այդ պատկառելի յոբելեանը և հրատարակել է տօնակատարութեան ծրագիրը։

Յոբելեանի օրը «Մշակի» մէջ կը տպվի մի ամփոփ յօդուած այդ միաբանութեան հաստատութեան և գործունէութեան մասին։ Վենետիկում «Մշակի» կողմից ներկայ կը լինի յատուկ ներկայացուցիչ։ Ժամանակին լոյս կը տեսնի մեր լրագրում յոբելեանի նկարագրութիւնը։ Իսկ այսօր մենք յիշեցնում ենք մեր հասարակութեանը այդ յոբելեանի մասին։

Մխիթարեան միաբանութեան հիմքը դրվեց Կոստանդնուպօլսում 1801 թուի օգոստոսի 26-ին, երբ քսանհինգ տարեկան երիտասարդ վարդապետ Մխիթարը, խմբելով իր շուրջը իր աշակերտներին և համախոհներին, ձեւակերպեց ապագայ կազմակերպութեան ծրագիրը, որից յետոյ սկսվեց այդ ծրագրի իրագործութիւնը։ Կոստանդնուպօլսից անցնելով Մօրէա և այնտեղից Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւնը վերջնականապէս հաստատվեց ս. Ղազարի կղզու վրա, հետագայում հանելով իրանից մի ճիւղ, որ արմատ դցեց Աւստրիայի մայրաքաղաք Վիէննայում։

Այն մեծ դերը, որ կատարեց Մխիթարեան միաբանութիւնը հայ գրականութեան ասպարէզում, պարտք է դնում մեզ վրա երախտագիտութեամբ յիշելու այն համեստ, բայց անխոնջ և եռանդուն գործողներին, որոնք իրանց երկարամեայ և մանրակրկիտ վաստակներով լոյս աշխարհ հանեցին հնագոյն հայ մատենագրութեան նշխարները, մշակեցին քերականութիւններ, յօրինեցին բառարաններ, տուին եւրոպական լեզուներից թարգմանութիւններ և պատրաստեցին հող մեր ներկայ գրական զարգացման համար։

Մենք հաւատացած ենք, որ յոբելեանի օրը ս. Ղազարի վանքը ականատես կը լինի, թէ ինչպէս աշխարհիս զանազան տեղերում ցրված հայ մարդը գիտէ գնահատել նրանց, որոնք աշխատել են նրա մտաւոր զարգացման, նրա լեզուի բարգաւաճման, նրա բարոյական մխիթարութեան համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԻՕՆԻՍՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

Երկուշաբթի, օգոստոսի 20-ին, Թիֆլիսում բացվեց սիօնիստների ժողովը, որին մասնակցում են թէ կովկասեան հրէաները եւ թէ ուրիշ տեղերի հրէական համայնքների ներկայացուցիչները։ Ժողովի նիստերը տեղի ունեն Միքայէլեան փողոցում գտնվող այն բնակարանում, ուր առաջ գտնվում էր գերմանական կլուբը։ Մեծ դահլիճի պատերը զարդարված են սիմվոլական նշաններով եւ նշանաւոր սիօնիստների լուսանկարներով։ Եբրայական տառերով գրված «Սիօն» բառը շրջափակված է մի շարք գծերով։ Միւս կողմում նկարված է Դաւիթ Մարգարէի վահանը։ Եռեւի պատի վրա գրված է եբրայական տառերով—«Թող չորանայ իմ աջը, եթէ մոռանամ քեզ, Երուսաղէմ»։

Դահլիճի ճակատին բեմի վրա տեղաւորվել էին պատգամաւորները յատուկ սեղանի շուրջը։ Մի կողքում գտնվում էին մամուլի ներկայացուցիչները, միւս կողքում դրված էր մի սեղան ճառախօսների համար։

Ժողովը բացեց ինժեներ Ուսիշկին, որ եկատերինօսլավեան շրջանի պատգամաւորն է։ Նա յայտնեց, որ սիօնիստները այժմ բաժանված են շրջանների, որոնցից մէկի, այն է եկատերինօսլավեան շրջանի մի ճիւղն է կազմում Կովկասը։ Ներկայ ժողովի բազմամարդութիւնը ցոյց է տալիս, որ սիօնիզմը համակրութիւն է գտել Կովկասում։

Յետոյ կարդացվեցին զանազան շրջանների ներկայացուցիչների կողմից հաշիւներ, որոնցից երեւաց, որ սիօնիզմի ճիւղերը սկսել են տարածվել ամենահեռաւոր անկիւններում եւ հրէական ազգայնական գաղափարը աւելի եւ աւելի համակրողներ է գտնում հրէական ազգաբնակութեան մէջ։

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Օգոստոսի 16-ին

Նախաձեռնողի, եռանդով գործի գլուխ անցնողի, դրդողի բացակայութիւնից է մասամբ, որ մեզանում բարեգործութիւնը կաղում է։ Այդ է վկայում Ատրպատականի նորընտիր առաջնորդ Եղիշէ վարդապետ Մուրադեանի առաջին քայլը։ Տոգորված բարենպատակ գործունէութեան համակրելի տենչերով, նա, դեռ իր թեմը ոտ չը դրած, արդէն սկսել է ապացուցանել, որ թեմական առաջնորդութեան կոչումը լոկ եկեղեցական ծիսակատարութիւնները եւ «Տէրն մեր Յիսուս-Քրիստոս»-ով սկսվող տէրտէրական քարոզները չեն...

Նրա յորդորները եւ հասկանալի լեզուով խօսած քարոզներն էին, որ դրդեցին պ. Գ. Միրզաբէկեանին նուիրելու Ատրպատականի հայերին մի արագատիպ մամուլ իր բոլոր պարագաներով, տառերով եւ ճանապարհածախսով։ Մամուլը, տպագրական գործը մի տենդային, եռուն շարժում առաջ կը բերէ մեռած Պարսկաստանի անշարժ կեանքում, եւ եթէ պ. Միրզաբէկեանի բարի օրինակը ունենայ արժանաւոր հետեւողներ, այն ժամանակ դըժուար չի լինի կամաց-կամաց իրագործել Եղիշէ վարդապետի միւս գեղեցիկ ծրագիրները, որոնք բոլորն էլ մի ընդհանուր նպատակէտի են ուղղված—նպաստել Ատրպատականի հայերի մտաւոր բարելաւութեան գործին։

Որքան մեզ յայտնի է, Եղիշէ վարդապետը, բացի կրթական գործի վրա լուրջ ուշադրութիւն դարձնելուց, մտադիր է նաեւ առանձին ուշադրութիւն դարձնել եւ այդ գործի հետ կապված տնտեսական հարցերի վրա։ Թէ որքան կաջողվի Ատրպատականի երիտասարդ առաջնորդին իրագործել իր համակրելի ծրագիրները—այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։ Աւելորդ է ասել սակայն, որ պարսկահայերի լաւագոյն ոյժերն էլ պէտք է նպաստեն այդ բանին. նրանք մինչեւ անգամ պարտական են բարոյական աջակցութիւն ցոյց տալու, որպէս զի Եղիշէ վարդապետի գեղեցիկ մտադրութիւնները խրախուսանք եւ համակրութիւն գտնեն տեղական հայ ազգաբնակութեան մէջ. այլապէս մէկ մարդու ոյժերին ապաւինելը—նրան չէզոքացնել, մենակ թողնել կը նշանակէ, որ երբէք ցանկալի հետեւանքներ առաջ բերել չէ կարող։

Մենք պնդում ենք—այդ մեր խորին համոզմունքն է—որ անշահասէր ցանկութեան, տենդային եռանդի, գործելու կրակով բռնկված եւ դէպի ժողովրդի շահերն անսահման սիրով համակված գործիչի առաջ չքանում են բոլոր խոչընդոտներն ու արգելքները։ Խորին հաւատ, անսահման սէր եւ տենդային եռանդ—ահա ինչ ենք ցանկանում մեր բոլոր գործիչներին։

Սար. Օհանջանեան

ՆԱՄԱԿ ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՑ

—

Օգոստոսի 13-ին

Փարթամ, ճոխ զուարճութիւնների երկրպագուները Աբասթումանում տխրում են այժմ, դժգոհ են։ Միատեսակ եւ ժանտաղ է կեանքը նրանց համար։

Մինչդեռ Աբասթումանի շրջակայքի բարձրաւանդակները, ծածկված լինելով հարուստ բուսականութեամբ, վիթխարի անտառներով, ունեն հրաշալի, կենդանարար օդ, սառը կարկաչահոս առուակներ. տասնեակ վերստերի հեռաւորութեան վրա կան լեռնային տեսարաններ, վայրենի ձորեր, ապառաժներ, կիրճեր, վերջապէս անցեալ փառքերի բեկոր-աւերակներ եւ լեռնային լճակներ։ Կուսական վայրերի մի դրախտ են այս տեղերը եւ ոչ միայն մի, այլ եւ մի քանի սեզոնների ընթացքում անկարելի է բոլորը պատել, տեսնել։ Հասկանալի է, թէ ինչը կարող է փոխարինել այս-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՕՆԻԶՄ

—

Այս օրերս Թիֆլիսում տեղի ունեն սիօնիստների համաժողովի նիստերը։ Օգտվում ենք առիթից ծանօթացնելու ընթերցողներին այդ հետաքրքրական հասարակական շարժման հետ, որ ոչ այլ ինչ է, եթէ չ ազգային շարժումն հրէաների մէջ, որոնք երկար արեր ապրում էին լոկ իբրև մի կրօնական համայնք։

Նախ և առաջ մենք տալիս ենք ընթերցողներին այնտի սիօնիստ և հուշկաւոր գրող Մաքս Նորդաուի օդուածը, որ ամփոփ տեղեկութիւն է տալիս այդ արժման մասին և որ տպվել է „Помощь евреямъ, пострадавшимъ отъ неурожая“ ժողովածուի մէջ, որի մասին մենք արդէն առիթ ենք ունեցել խօսելու „Մշակում“ (№ 182)։

Ժողովածուի խմբագրութիւնը, տպելով Նորդաուի յօդուածը, նկատում է, որ հեղինակը համեստութիւնից ոչ մի խօսք չէ ասում այն ահագին դերի մասին, որ ինքը խաղացել է սիօնիստական շարժման մէջ, ուր նա առաջին տեղն է բռնում դոկտոր Հերցլի հետ։

I

Սիօնիզմը, որքան նա արտայայտում է միայն հրէայ ժողովրդի բուռն ձգտումը դէպի Սիօն, մի նոր անուն է շատ հին զգացմունքի համար։ Այն ժամանակից, երբ Տիտոսը կործանեց Երուսաղէմի երկրորդ տաճարը եւ հրէայ ազգը ցիր ու ցան եղաւ աշխարհիս բոլոր երկիրները, այդ ժողովուրդը շարունակ բուռն ցանկութիւն է ունեցել եւ հաստատ յոյս՝ վերադառնալու իր հայրերի երկիրը։ Հրէաների այդ կարօտը դէպի Սիօնը եւ յոյսը Սիօնի վերաբերմամբ՝ մի տեսակ կօնկրէտ, եթէ կարելի լինէր, կասէի՝ աշխարհագրական արտայայտութիւն էր այն հաւատի, որ նրանք ունէին Մեսսիայի գալստեան վերաբերմամբ եւ որ նրանց կրօնի կարեւոր բաղկացուցիչ մասն էր կազմում։ Եւ յիրաւի, մեսսիականութիւնը ու սիօնիզմը դրեթէ երկու հազարամեակների ընթացքում եղել են նոյնանիշ գաղափարներ, եւ առանց մանուածապատ սոփեստութիւնների դժուար է հրէական պատարագի մէջ աւետեալ Մեսսիայի գալստեան վերաբերեալ աղօթքները բաժանել այն աղօթքներից, որոնց նպատակն է ոչ պակաս բաղձալի վերադարձը դէպի պատմական հայրենիքը։

Այդ աղօթքները մինչեւ վերջին դարերը հասկացվում էին բառացի նշանակութեամբ, ինչպէս մինչեւ այժմ էլ հասկանում են նրանց ուղղադաւան հրէաները։ Հրէաները գիտէին, որ իրանք մի այնպիսի ազգ են, որ իր մեղքերի պատճառով զրկվել է հայրենի հողից եւ դատապարտված է ապրելու իբրեւ պանդուխտ օտար երկիրներում,—մի ազգ, որի ծանր տառապանքները կը վերջանան միայն այն ժամանակ, երբ նա նորից կը ժողովվի Սուրբ երկրի նուիրական հողի վրա։

Միայն XVIII դարի մէջերքում,—երբ լուսաւորութիւնը, որի առաջին կարապետը եղաւ ժողովրդականացնող փիլիսոփայ Մովսէս Մենդելսօն, սկսեց թափանցել հրէական միջավայրը,—այդ գաղափարը սկսեց փոխվել։ Հաւատը թուլացաւ. կրթված հրէաները, եթէ բոլորովին չէին կտրվում հրէութիւնից, բացիօնալիստական կերպով էին ըմբռնում իրանց կրօնի վարդապետութիւնները. նրանց համար հրէայ ազգի ցրվումը վերջնական եւ անփոփոխելի մի իրողութիւն էր. նրանք զրկեցին մեսսիականութեան եւ սիօնիզմի գաղափարները իրանց ամբողջ կօնկրէտ բովանդակութիւնից եւ յօրինեցին մի ինքնուրոյն վարդապետութիւն, որի համաձայն՝ հրէաներին աւետված Սիօնը պէտք էր հասկանալ միայն հոգեւոր մտքով, իբրեւ պահպանումն հրէական միաստուածութեան ամբողջ մարդկութեան մէջ, իբրեւ միակողմանի յաղթանակ հրէական բարոյականութեան՝ ուրիշ ազգերի նուազ վսեմ ու ազնիւ վարդապետութիւնների նկատմամբ։ Մէնդելսօնեան լուսաւորութիւնը յաջորդաբար զարգանալով առաջ բերեց XIX դարի առաջին կէսում «ռէֆօրմը», որ գիտակցաբար կտրում էր իր կապը սիօնիզմի հետ։ Ռէֆօրմի ենթարկված հրէաների համար Սիօն բառը նոյնքան քիչ իմաստ ունի, որքան եւ ցրվումը։ Նրանք իրանց ամենեւին ցրված չեն զգում։ Նրանք հերքում են հրէայ ազգի գոյութիւնը եւ իրանց նրա անդամը չեն համարում։ Նրանք ուզում են պատկանել միայն այն ազգին, որի մէջ ապրում են. նրանց համար հրէութիւնը լոկ կրօնական գաղափար է եւ ոչ մի առնչութիւն չունի ազգայնութեան գաղափարի հետ։ Նրանց համար՝ ծննդավայրը հայրենիք է, եւ ուրիշ հայրենիք նրանք ճանաչել չեն ուզում։ Պալեստինէ վերադառնալու միտքը վրդովեցնում է նրանց կամ ծիծաղ է պատճառում։ Այդ մտքին նրանք առարկում են յիժար սրախօսութեամբ. «եթէ հրէից տէրութիւնը վերականգնվէր Պալեստինէյում, ես կուզէի ստանալ հրէից դեսպանի պաշտօն Պարիզում»։

Մտածող հրէաների համար չէր կարող երկար ժամանակ աննկատելի մնալ, որ ռէֆօրմի ենթարկված հրէութիւնը կիսագործ է, եւ, ինչպէս միշտ լինում է այդպիսի դէպքերում, կրում է իր մէջ կորստեան սաղմ, որովհետեւ ոչ մի բոպէ չէ կարող դիմանալ տրամաբանական քննադատութեան։

Ո՞ւմ պէտք է բաւարարութիւն տար բարեփոխված հրէութիւնը։ Ուղղադաւան հրէաներին։ Այդ չէ՞ որ նրանք ամենախոր արհամարհանքով հրաժարվել էին ռէֆօրմից։ Անհաւատներին։—Նրանք արհամարհում են ռէֆօրմը, իբր ծաղր եւ դատարկ շռայլութիւն։ Թէ՞ այն հրէաներին, որոնք յիրաւի ուզում են կտրվել իրանց ազգի անցեալից ու ձուլվել իրանց շրջապատող քրիստոնեայ հասարակութեան մէջ։ Այդ հրէաներին բարեփոխված հրէութիւնը նոյնպէս չէ կարող բաւարարութիւն տալ, որովհետեւ այդպիսիները մի քայլ աւելի հեռու են գնում եւ այդ քայլը տանում է նրանց դէպի մկրտութեան աւազանը։ Աւելի եւս քիչ կարող է գոհացնել նա այն հրէաներին, որոնք կուզէին պաշտպանել հրէութիւնը կորուստից, պահպանել նրան իբր ազգային անհատականութիւն։ Որովհետեւ նրանց համար՝ բացարձակ հրաժարումը բոլոր ազգային ակնկալութիւններից կը նշանակէր, որ հրէական ազգը ինքն իրան մահվան է դատապարտում, գուցէ դանդաղ, բայց անպայման մահվան։ Բարեփոխված հրէութիւնը առանց սիօնիզմի, այսինքն առանց բաղձանքի եւ յոյսի հրէական ազգի վերամիացման նկատմամբ,—ապագայ չունի։ Ամենալաւ դէպքում նա կարող է համարվել ոլորապտոյտ ճանապարհ դէպի քրիստոնէութիւնը։ Ով ուզի հասնել այդ նպատակին նա այժմ կերթայ աւելի ուղիղ ու կարճ ճանապարհով։

(Պը շարունակվի)

պիսի ընութեան ծոցում անցկացրած ժամերը, կատարած զբօսանքները։ Մթէ հաճոյքը, վայելչութիւնը միայն տեսակ-տեսակ, կուշտ ուտկն ու կուշտ քնելն է, իսկ եւ իսկ ինչպէս մեծ քաղաքում։ Եթէ այդպէս է, պէտք է դեռ զարմանալ, որ Աբասթումանը բանտ չէ թուում մեր տուղերին։

Էսթետիկական բաւականութեան տեսակէտից ներկայ սեզօնը առանձին հետաքրքրութիւն էր ներկայացնում։ Շնորհիւ ռուս եւ հայ երկու սեռի երիտասարդութեան եռանդուն, նոյն իսկ տենդային գործունէութեան, յուլիսի 14-ից մինչեւ այժմ, ուղիղ մի ամսվայ ընթացքում, եղան բարեգործական նպատակներով չորս ներկայացում եւ երկու կոնցերտ։ Վերջին կոնցերտը տուին՝ երգիչներ Նալբանդեան եւ Մամաջանեան, օրիորդ Ցուրինեանի մասնակցութեամբ, առաջին անտառի նորակառոյց դահլիճում, որը աւելի աջող ըէզօնանս ունի։ Մամաջանեանի յանկարծակի հիւանդութեան պատճառով՝ կոնցերտի ամբողջ բեռը ծանրացաւ Նալբանդեանի ուսերի վրա եւ նրա մասը մնաց չերգված։ Այնու ամենայնիւ, չը նայած երիտասարդ երգչի յուզված դրութեանը, նրա երգած կտորները հասարակութեան վրա ախորժելի տպաւորութիւն թողեցին եւ ձայնը բաւական դուրեկան էր։

Չը նայած հայ հասարակութեան բուռն ցանկութեան, ոչ մի հայերէն երգ չերգեց պ. Նալբանդեան, եւ ոչ էլ կանխապէս պարտաստել էին ծրագրի մէջ մտցնելու։ Նոյն իսկ ռուսները նկատում էին, թէ ինչպէս կարելի է հայ երգիչին լսել առանց «Կռունկի»։

Դահլիճը ծայրէ ծայր լցված էր։

Կ. Տ.-Ց.

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՒԵՐԻՑ

Օգոստոսի 8-ին

Նորերս տեղացի մի քանիսի խնդրով այստեղ էր եկել գիւղատնտես պ. Ս. Զաւարեան։ Սրա առաջարկով, գիւղական վարչութեան շինութեան մէջ գիւղացիներից ժողով էր կազմված՝ գաշտային մկներին ոչնչացնելու միջոցների մասին մտածելու համար։ Ժողովը պ. Զաւարեանի խորհուրդով վճռեց համախօսական կազմել եւ գիւղական դրամագլխի մի մասով մկնդեղ բերել տալ Թիֆլիսից իբրեւ մկներին թունաւորելու միջոց։ Սակայն տանուտէրի օգնականը իրաւունք չը համարեց հաստատել այդ համախօսականը, քանի որ տանուտէրը արձակուրդով հեռացած է պաշտօնից եւ այժմ էլ գիւղից բացակայ է։ Ժողովը անհետեւանք ցրվեց։ Պ. Զաւարեան առաջարկեց գիւղացիներին իրանց միջից փող հաւաքել եւ հաւաքված մի փոքրիկ գումարով յանձն առաւ Թիֆլիսից մկնդեղ ուղարկել գիւղացիներին բաժանելու համար, ի հարկէ պաշտօնապէս թոյլտուութիւն ստանալուց յետոյ։

Օգոստոսի 5-ին տեղիս հայ եւ ռուս սիրողները տուին երկրորդ ներկայացումը։ Խաղացվեցին «Визитъ Его Превосходительства», «Պէպօ» եւ «Безпокойная ночь» պիէսները։ Թէ այս եւ թէ Նախորդ ներկայացման համար գիւղում յարմարաւոր տուն չը գտնելու պատճառով ժամանակաւոր թատրոնական դահլիճի էր վերափոխված տեղացի պ. Վաս. Քալանթարեանի այգում գտնվող ընդարձակ մառանը, որի պատերը կարպետ-խալիչաներով եւ կաղնու տերեւներից հիւսած չարաններով այնպէս սիրուն զարդարված էին եւ բեմին յարմարեցրած, որ եթէ պատահմամբ ինքը Բաքոսը իր այդ պահեստատունը տեսնէր՝ ակամայից Մելպոմէնէին պիտի գիջէր այդ համեստ տաճարը։ Ռուսերէն վոդէվիլները եւ ռուս սիրողների աշխոյժ խաղը հանդիսականներին շատ ծիծաղ պատճառեցին։ Աչքի էին ընկնում Բլօնսկայա քոյրերը եւ պ. Լիզլով։ Հայ սիրողների մէջ նկատվում էր դերերի լաւ ըմբռնում։ Տեղ-տեղ միայն սիրողներից շատերը աղաւաղում էին Թիֆլիսի բարբառը։ Լեզուի այդ լաւ չիւրացնելը քիչ փորձերին պիտի վերագրել։ Շատերը փորձով տեսած կը լինեն, թէ ինչպիսի դժուարութիւններ են առաջ գալիս թատերասէրների առաջ, երբ միտք է յղանում գաւառում, ուր բեմ ասած բանը չը կայ, ներկայացում աջողեցնել, յարմարաւոր տուն ճարել, բեմ կանգնեցնել, դէկօրացիաներ պատրաստել, աթոռներ գտնել, տոմսակ վաճառել, հագուստների ետեւից ընկնել եւ ուրիշ հազար ու մի պահանջները հոգալ եւ այն եւ այն, այնպէս որ սիրողները նոյն իսկ կանոնաւոր փորձեր անելու էլ ժամանակ չեն գտնում։

Ահա այս է դերերը լաւ չը սերտելու պատճառը, ուստի եւ միշտ ներողամիտ աչքով պիտի նայել այդ բանին։ Ներկայացման գիշերը նոյն իսկ սիրողներից մի քանիսի դէմքերը ու շարժումները հէնց ծայրայեղ յոգնածութեան ապացոյց էին։ Չը նայելով սրան, ներկայացումը շատ բաւականութիւն պատճառեց հանդիսականներին։

Դերակատարներից լաւ էին օր. Ս. Ղալաչեան՝ Շուշանի դերում եւ պ. Գ. Մելիք-Սարգսեանը, որը այդ երեկոյ տուեց մեր տաղանդաւոր կոմիկ պ. Տէր-Դաւթեանից լաւ ընդօրինակած Գիքոր։ Այս ներկայացման եկամուտը յատկացրած էր բեմին եւ գոյացած 53 ռուբլի զուտ արդիւնքը գործադրված է բեմական յարմար պարագաներ ձեռք բերելու համար։ Հերիք է մի քանի այսպիսի ներկայացումներ—նոյն նպատակով—եւ ահա թատերասէրների տրամադրութեան տակ կը լինի անկասկած մի շարժական գեղեցիկ բեմ իր՝ գաւառին յարմար սարք ու կարգով։ Արժանի է շնորհակալութեան եւ այդեսէր պ. Վ. Քալանթարեան, որը ոչ մի աշխատանք չը խնայեց ներկայացման աջողելուն եւ իր այգու մառանը ձրի թողեց սիրողների տրամադրութեան տակ։

Ա. Ի.

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Օգոստոսի 12-ին

Օգոստոսի 9-ին հայ թատերասէրները քաղաքային ժողովարանի դահլիճում բարեգործական նպատակով ներկայացրին Սունդուկեանցի «Խաթաբալա» կոմեդիան եւ «Կրոթ-Կրոթ» վոդէվիլը։ Ներկայացումից զուտ արդիւնք մնաց 70 ռուբլի։ Այս ներկայացման ատիթով մի քանիսը կարծիք յայտնեցին, թէ «Խաթաբալան» հնացել է եւ ունի միայն պատմական նշանակութիւն. ծիծաղելի էր մանաւանդ, որ այսպիսի կարծիք լսվեց եւ օրիորդների շրջանից. սակայն մեր քաղաքը դեռ եւս այն աստիճանի առաջադիմութեան չէ հասել, որ «Խաթաբալան» համարվի նրա համար հնացած։ Զամբախով, Խամփերի եւ ուրիշներ կենդանի տիպեր են մեզանում եւ դեռ երկար գոյութիւն կունենան։ Սրան հարկաւոր է աւելացնել, որ մեր հասարակութեան անպատրաստութեան եւ մայրենի լեզուն սակաւ իմանալու պատճառով՝ շատ դժուար է այստեղ մաքուր գրականական լեզուով կոմեդիաներ տալ։

Մեր թատերասէրները վճռել են հայ թատրոնական գործին տալ հաստատ կազմակերպութիւն, տալով պարբերական հայոց ներկայացումներ բարեգործական նպատակով, որքան կը համապատասխանեն ազնխեցիների ժլատ գրպաններին։ Ամեն մի ներկայացում վճռված է կրկնել ձրիաբար կամ էժան գնով չքաւոր դասակարգի համար։ Շուտով բերելու են բաւական քանակութեամբ պիէսներ։ Ցանկալի է, որ մեր ձեռնհաս անձինք օգնեն սիրողներին այս համակրելի գործը աջողութեամբ առաջ տանելու։ Շնորհակալութեան արժանի են օրիորդներ Ա. Գօձեան եւ Մ. Տէր-Դաւթեան, որոնք սիրով մասնակցում են հայոց ներկայացումներին եւ, պէտք է խոստովանել, որ եթէ սրանք չը լինեն, անկարելի կը լինի այստեղ հայերէն ներկայացում տալ, որովհետեւ մեր բազմաթիւ օրիորդներից միայն սրանք են վստահանում բեմ դուրս գալ։

Զարմանալի եւ տարօրինակ ընթացք է բռնել Թիֆլիսի կոնսիստորիան քահանայական հարցում։ Մի քանի տարի առաջ կոնսիստորիան ս. Գէորգ եկեղեցու համար ձեռնադրել տուեց երկրորդ քահանայ, չը նայելով, որ նոր քահանայի կարիք բոլորովին չը կար, քանի որ եկեղեցին ամենայն հեշտութեամբ կարող էր կառավարել միայն մէկ քահանայ, որովհետեւ այդ եկեղեցին յաճախողների թիւը շատ փոքր է, իսկ ծխականները տարէցտարի գաղթում են օտար քաղաքներ։ Այդ եկեղեցում անցեալ տարի եղել է մօտ 30 մկրտութիւն։ Ս. Գէորգ եկեղեցու քահանաները մի եւ նոյն ժամանակ երկար տարիներ հովում էին Անապա, Վաքերի եւ Կարդանախի գիւղերում բնակվող հայերին, թեւով մօտ 30 ընտանիք. այդ գիւղերն երբէք սեփական քահանայ չեն ունեցել։ Այժմ Թիֆլիսի կոնսիստորիան յիշեալ գիւղերի համար քահանայ է ձեռնադրել Յովսէփ Առաքելեանին եւ այսպիսով ամենանեղ վիճակի մէջ է գցել ս. Գէորգի քահանաներին, զրկելով նրանց գիւղական ծխականներից։ Այդ քահանաներից մէկը խնդիրք է ուղարկել կոնսիստորիային, խնդրելով տեղափոխել իրան այստեղից։ Միւս կողմից, նորընծայ քահանան լաւ իմանալով, որ 30 ընտանիք կառավարելով՝ անկարող է գիւղում ապրել, բնակութիւն է հաստատել Սղնախում, իսկ գիւղացիներն առաջվայ պէս զուրկ են մնում մշտական ժամատարութիւնից եւ օրինակատարութիւնների համար ստիպված պէտք է լինեն դարձեալ Սղնախ գալ իրանց սեփական քահանային կառքով կամ ձիով տանելու։ Հոգեւոր իշխանութիւնը, պատրուակ բռնելով գիւղացիների հոգեւոր մխիթարութիւնը, բարւոքից արդեօք սրանով գիւղացիների դրութիւնը...

Մօտ օրերումս գաւառապետի նախագահութեամբ կայացաւ սանիտարական հոգաբարձուների ժողովը քաղաքի առողջապահական դրութիւնը բարելաւելու նպատակով։ Գաւառապետը, Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեան համաձայն, հրաւիրեց հոգաբարձուներին՝ եռանդուն միջոցներ ձեռք առնելու քաղաքում մաքրութիւն պահպանելու համար, սակայն, մինչեւ որ քաղաքային վարչութիւնը չը կազմակերպէ քաղաքային սայլերը՝ աղբ դուրս տանելու համար, երբէք հնարաւոր չի լինի մտածել մաքրութեան մասին, իսկ հոգաբարձուները, չը նայելով նրանց տուած հրահանգներին, ոչինչ չեն չինի, ինչպէս որ մինչեւ այժմ ոչինչ չը չինեցին։

Յուլիսի 1-ին կայացած ծխականների ժողովը որոշեց պարտաւորեցնել Ն. Ամիրխանեանին, որ մոմապահեստի կառավարիչն է, անյապաղ հաշիւ տալ եկեղեցական յանձնաժողովին, սակայն նա չը կատարեց այդ։ Այս ատիթով յանձնաժողովի անդամների երեքի ստորագրութեամբ կազմվեց արձանագրութիւն եւ ուղարկվեց կոնսիստորիային, որ այժմ կարգադրել է, որ Ն. Ամիրխանեան երկու շաբաթվայ ընթացքում հաշիւ տայ այդ յանձնաժողովին, հակառակ դէպքում առնել նրանից մոմապահեստը եւ յանձնել երէցփոխներից մէկին։

Ց. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 20-ին

«Մշակի» № 180-ում կարդացի պ. Ա.-ի նամակը, որի մէջ ասված էր. թէ Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու քահանաներից մէկը «լուսարարի» եւ «հաշուատես գրագրի» անունով ոռճիկ է ստանում երէց-փոխից։ Լինելով նոյն եկեղեցու միաբաններից մէկը, թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար, հրապարակով յայտնում եմ, որ ես չեմ այդ «լուսարար» քահանան։

Ալէքսանդր քահ. Տէր-Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ Ռաֆայէլ Պատկանեանի արձանի բացումը տեղի կունենայ առաջիկայ սեպտեմբերի 23-ին։

Մեզ հաղորդում են, որ կովկասեան ցուցահանդէսի վարչութիւնը սկսում է պատրաստել ցուցահանդէս բերված իրերի կատալոգը։ Իւրաքանչիւր բաժնի կարգադրիչ կը կազմի իր ցուցակը եւ ապա բոլորը կը միացվեն մի ընդհանուր հատորի մէջ։

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը շուտով կը գումարվի խորհրդածելու դպրոցի տեսչի եւ դասաւանդութեան մասին։ Արտակարգ նիստը, որ նշանակված էր երկուշաբթի օր, օգոստոսի 20-ին, չը կայացաւ հոգաբարձուների Թիֆլիսից բացակայ լինելու պատճառով։ Առաջիկայ հոգաբարձական նիստը դժուար լուծելի հարցերի հետ պէտք է գործ ունենայ։

Երկուշաբթի, օգոստոսի 20-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը դիմեց կառավարութեան մի միջնորդութեամբ, որով խնդրում է թոյլ տալ տօնել Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ-Իշխանուհի Օլգա Ֆէօդորօվնայի յիշատակը՝ համաձայն քաղաքային խորհրդի որոշման, որ տեղի է ունեցել 1901 թուականի յունիսի 18-ին։ Այս միջնորդութեամբ խնդրվում է նաեւ թոյլ տալ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ստորագրութիւն բանալ ամբողջ Կովկասում եւ հաւաքած նուիրատուութիւններով արձան կանգնեցնել Թիֆլիսում Մեծ-Իշխանուհի Օլգա Ֆէօդորօվնային։ Բացի սրանցից՝ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը թոյլատրութիւն է խնդրում երկու թոշակաւորներ պահելու Մեծ-Իշխանուհու անունով կանանց բժշկական բարձրագոյն կուրսերում։

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Օգոստոսի 19-ին Թիֆլիսի Մետեխի բանտի հայոց եկեղեցում էլ հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Գրիգոր Զանչեանի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էին հայ եւ օտարազգի բանտարկեալներ։ Բանտերի հայ քահանան, ինչպէս եւ անցեալ տարի, հաւատոյ խօսեց հանգուցեալի տաղանդի եւ նրա գրչի միջոցով կատարված բարեգործութեան մասին»։

—

Թիֆլիս եւ Բագու քաղաքները, ինչպէս նաեւ Բագուի գաւառը, մինիստրների կոմիտէի՝ բարձրագոյն հաստատված որոշման համաձայն, յայտարարված են սաստկացրած պաշտպանութեան դրութեան մէջ մի տարի ժամանակով, սկսած 1901 թուի սեպտեմբերի 4-ից մինչեւ 1902 թուի սեպտեմբերի 4-ը։

—

Մի քանի ամիս առաջ Թիֆլիսում կազմվեց հայոց դրամատիկական ընկերութեան կանոնադրութեան մի ծրագիր եւ ներկայացվեց ներքին գործերի մինիստրութեան հաստատութեանը։ Այժմ «Новое Обозрѣніе» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, թէ կանոնադրութեան այդ ծրագիրը ընդհանուր առմամբ հաւանութիւն է գտել մինիստրութեան կողմից։ Մտադրութիւն կայ միայն առաջարկել ընկերութեան հիմնադիրներին փոխել կանոնադրութեան մի քանի կէտերը։ Այսպէս, օրինակ, հիմնադիրները ցանկութիւն ունէին կանոնադրութեան ներգործութիւնը տարածել ամբողջ Կովկասի վրա, իսկ մինիստրութիւնը ենթադրում է սահմանափակել կանոնադրութեան ներգործութիւնը Թիֆլիսի նահանգով։ Կանոնադրութեան ծրագրի մէջ կայ նաեւ մի կէտ, որով ընկերութիւնը իրաւունք է ստանում հրատարակել իր լրագիրը կամ ամսագիրը. մինիստրութիւնը ենթադրում է դուրս գցել կանոնադրութիւնից այս կէտը։ Հիմնադիրները մտադրութիւն ունէին պահել ընկերութեան գումարները՝ վերածելով նրանց արժէքաւոր թղթերի, մինիստրութիւնը անհրաժեշտ է համարում, որ ընկերութեան գումարներով առնվեն միայն պետական արժէթղթեր։ Այս բոլոր փոփոխութիւնները շուտով կառաջարկվեն յիշված ընկերութեան հիմնադիրների քննութեան։

—

Ռուսաց կայսերական աշխարհագրական ընկերութեան մէջ մօտ օրերումս տեղեկութիւն է ստացված Ֆրանսիացի յայտնի օդապնաց Մարկիզ դը-Վօից, թէ նա մտադրութիւն ունի մի հսկայական թռիչք գործել օդապարիկով Պարիզից դէպի Պետերբուրգ։ Մարկիզ դը-Վօ առաջին անգամը չէ, որ կատարում է օդապարիկով մեծ թռիչքներ։ Կարծում են, որ նրա այժմեան թռիչքն եւս աջող կանցնի։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Մայիս 13-ին Դիլիջանի նորակառոյց եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ Գ. Զանչեանի մահվան տարեդարձի առիթով»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այսօր, օգոստոսի 18-ին, նոր ընտրված ձայնաւորները երդվեցին. շուտով կը նշանակվի քաղաքագլխի եւ վարչութեան մի անդամի ընտրութիւնը»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են։ «Թիֆլիսի ցուցահանդէսին մասնակցելու են Ղուբայից եւ նրա գաւառի կողմից։ Ղուբայի այգեգործական դպրոցը, Հուսարի՝ Բագուի կլասիկական գիմնազիայի գիւղատնտեսական կօլոնիան, կալուածատէր Դէբուր, որը ցոյց է տալու ութը տեսակ գինի Ղուբայի գաւառում պատրաստած, Ա. Ծատուրեան—գինի՝ երեք տեսակ, հացահատիկներ, ծխախոտ, Ղուբայի գաւառապետ պ. Ֆ. Ադէմինսկին կը կարդայ զեկուցում Ղուբայի գաւառի արդիւնաբերութեան մասին. կալուածատէր Հարուն բէկ Զիզիկսկին ուղարկում է հացահատիկներ, գութանի եւ այլ պարագաների նմուշներ. այդեսէր Հաջի-Ալի-Հուսէյն-Բարաեվ տասն եւ երկու տեսակ պանիր ու խնձոր։ Ուղարկված բաների մէջ կը լինեն նաեւ Ղուբայի նաւթ, տորոն, քարածուխ, գորգեր եւ այլն»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ, օգոստոսի 26-ին, Մխիթարեան միաբանութեան 200-ամեակի առիթով կայանալու է պարահանդէս՝ գրական եւ թատերական մասերով։ Խաղալու են երկու վոդէվիլ, կարդալու են մի քանի ոտանաւորներ, գլխաւորապէս Մխիթարեանների հեղինակութիւններից եւ կամ նրանց նուիրված։ Ցոյս ունենք, Կարսի հայ հասարակութիւնը, առանց կրօնի խտրութեան, ջերմ մասնակցութիւն ցոյց կը տայ այդ օրը որչափ կարելի է չքեղ տօնելու»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Անցեալ կիրակի օրը դերասան պ. Խաժակ, սիրողների մասնակցութեամբ, ներկայացրեց «Ասլան-բալասի»։ Ներկայացումից 2—3 օր առաջ քաղաքացիներից շատ շատերը ստանում են պօստատան ցրուիչի միջոցով «տոմսակներ»։ Ո՞վ է ուղարկողը, ինչո՞ւ համար է ուղարկված՝ յայտնի չէ։ Ծրարները ձեռքերին սրան-նրան դիմելով հարցնում են—ո՞վ է ուղարկել, ինչո՞ւ են ուղարկել։ Պարզվեց, որ պ. Խաժակն է ուղարկել։ Ինչպէս լսեցինք, սիրողները բարեգործական նպատակով տուած ներկայացումների տոմսակներն անգամ այժմ չեն ուղարկում տները. ինչպէս մի դերասան թոյլ է տալիս իրան այդպիսի վարմունք։ Ինչ վերաբերում է խաղին, միայն մի բարեկամական խորհուրդ կարող ենք տալ պարոնին—թողնել բեմը, որովհետեւ ներկան ապացուցանում է, որ ապագան յուսալի չէ»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ցայտնի է, որ Հասան-Ջալալեանների տոհմական կալուածքները գտնվում են Գանձասար հռչակաւոր վանքի մօտ, ուր հողերն ու արօտամարգերը անգին տարածութիւն են կազմում։ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանի ժամանից յետոյ այդ անգին տարածութեան վրա սփռված անտառները մեծ մասամբ բաժին ընկան նրա ազգականներին եւ մերձաւորներին։ Այժմ այդ տեղերում Հասան-Ջալալեան ցեղի երեք ներկայացուցիչներ գտել են արծաթի եւ պղնձի հանքեր։ Սկզբում նրանք դժուարացել են իմանալու, թէ այդ հանքերից որը կարող է արծաթ լինել, բայց յետոյ մասնագէտ մարդկանց միջոցով կարողացել են որոշել հանքերի յատկութիւնները։ Նորերս բելգիական ընկերութեան ներկայացուցիչներից մէկը, լսելով, որ հանքերի հետքեր են երեւացել վանքի մօտ գտնվող կալուածքներում, եկաւ այստեղ, յետոյ ուղեւորվեց դիտելու հանքերը, որից յետոյ գրաւոր պայման կապեց Հասան-Ջալալեանների հետ, որ ինքը կաշխատէ երեք ամսվայ ընթացքում վաճառել այդ հանքերը օտար կապիտալիստներին, որպէս զի նրանք կարողանան շահագործել հանքերը։ Հաղորդելով «Մշակի» ընթերցողներին Գանձասարի վանքի մօտ գտնված հանքերի եւ բելգիական ընկերութեան ներկայացուցչի գալու մասին՝ հրատարում եմ մեր Կովկասի հայ եւ ռուս կապիտալիստների ուշադրութիւնը, որ նրանք աշխատեն օգտվել յարմար հանգամանքից, վերցնեն այդ հանքերը եւ սկսեն շահագործել։ Ինչո՞ւ պէտք է թողնել, որ օտար դրամատէրերը իրանց ձեռքը առնեն մեր երկրի բոլոր հարստութիւնները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Բոստոն, օգոստոսի 5-ին

Անցեալ շաբթու հրատարակուեցաւ Ամերիկայի հայոց համաժողովին սահմանադրութիւնը, որ պատրաստուած է ժամանակաւոր յանձնախմբի մը կողմէն։

Համաժողովը գումարուեցաւ անցեալ տարի դեկտեմբերի 24—26-ին, բայց որովհետեւ այդ առաջին ժողովն Ամերիկայի հայոց ընդհանրութիւնը չէր ներկայացներ, ժողովականները որոշեցին առժամեայ յանձախումբ մը ընտրել, որ աշխատի յաջորդ համաժողովին մէջ ունենալ Ամերիկայի բոլոր հայաբնակ քաղաքներու ձայները։ Պատգամաւորները անկից վերջ իրենց տեղերը դարձան։

Յանձնախումբը դեռ չը կրցաւ երկրորդ համաժողովը գումարել, որուն համար յուլիս 4-ը նշանակուած էր։ Օդերը շատ տաք էին. այդ էր պատճառը, ըսին, եւ ժողովը յետաձգեցին սեպտեմբերի զով օրերուն, թէեւ մինչեւ հիմա քաղաքները շատ փութկոտութիւն ցոյց չեն տար պատգամաւոր ընտրելու։

Առժամեայ յանձնախումբը, որ համաժողովին որոշումները իրագործելու պաշտօնը ստանձներ էր, մինչեւ հիմա երեք գործ է կատարեր,—Անգլիոյ թագուհին մահուան առթիւ ցաւակցական հեռագիր մը ուղղեց Անգլիոյ թագաւորին, Ֆրանսայի հայասէր հրատարակութեան մը համար 100 դոլար հանգանակեց եւ սահմանադրութիւնը պատրաստեց։ Պէտք է ըսել, թէ այս վերջինը կատարուած աշխատութեանց ամենէն արժէքաւորն է։

Սահմանադրութիւնը յառաջաբանի տեղ կը յայտնէ, թէ Ամերիկայի հայոց զուտ ազգային կազմակերպութեան նպատակն է. 1) հայոց շահերը պաշտպանել իբրեւ քաղաքացի Ամերիկայի մէջ եւ Ամերիկային կառավարութեան միջոցով հայ քաղաքացիներուն շահերը Թիւրքիոյ մէջ. 2) ուսումնասիրել եւ գտնել միջոցներ Ամերիկայի հայոց նիւթական եւ մտաւոր վիճակը բարձրացնելու. 3) ազգային լեզուի եւ պատմութեան դասեր աւանդելու միջոցներ գտնել հայ մանչերու եւ աղջիկներու. 4) օգնել հայրենիքի որբերուն, սովելոց եւ այլ արկածելոց. 5) արժանաւոր պատանեաց եւ օրիորդներու դաստիարակութեան նպաստել. 6) մայր հայրենիքի մէջ ազգային դաստիարակութեան գործին նպաստել. 7) օժանդակել հայ թէ օտար մարմնոյն, որ կը սատարէ ազգային դատին յաջողութեան. 8) հայկական խնդիրը քաղաքակիրթ աշխարհին ծանօթացնելու միջոցներ գործածել։

Այս նպատակին իրագործման համար Միացեալ-Նահանգաց հայերու եօթը շրջանները իրենց թւոյն համեմատութեամբ երէցփոխաններ պիտի ընտրեն, որոնք տարին գոնէ մէկ անգամ պիտի գումարեն երէցփոխական ժողովը։ Ժողովը պիտի ընտրէ վարչութիւն մը 12 անդամէ բաղկացեալ, մէկ տարուան համար։

Վարչական մարմնոյ պաշտօնը պիտի ըլլայ երէցփոխական ժողովոյ որոշումները գործադրել, չը նախատեսուած դէպքերու առիթով պէտք եղած տնօրինութիւններ ընել, երէցփոխական ժողովը գումարել եւ այլն։

Ինչպէս կը տեսնուի, ընդարձակ գործունէութեան ասպարէզ մը բացուած է, սակայն այս բոլորին համար հասոյթի միակ աղբիւրը պիտի ըլլայ ամեն քուէտուի տարեկան կէս դոլարի տուրքը եւ հարկ եղած ատեն արտասովոր հանգանակութիւնները. վարչական ժողովոյ անդամները ձրի պիտի ծառայեն։

Պէտք է ըսել, թէ գաղթականութեան մէջ սահմանադրութեան այլ եւ այլ նպատակներուն ծառայող անհամար ընկերութիւններ արդէն կան, օրինակ որբանոցներ, դպրոցասիրաց եւ այլն։ Վարչական մարմինը կը խոստանայ այդ ընկերութեանց օգնել, անոնց հասոյթի աղբիւրները շատցնել, ի հարկին նոյն իսկ ամերիկացւոց դրամական օգնութիւնը խնդրել այդ նպատակներուն համար։ Վարչութիւնը Ամերիկայի հայոց գրագարաններուն հետ կը բանակցի նաեւ կազմելու հայ հրատարակչական ընկերութիւն մը, թէեւ ոչ գրքեր հեղինակելու կարող մարդիկ ունինք եւ ոչ ալ ընդունակ թարգմանիչներ։

Սահմանադրութիւնը թղթի վրայ շատ գեղեցիկ է, սակայն անոր ո՞ր մասը կրնայ իրագործուիլ, այդ է կարեւոր խնդիրը։ Ֆրանսացի մը դիտելով Ամերիկայի տեղական կեանքը, եանքիներու չարաչար աշխատանքը եւ անընդհատ վազքը դօլարին ետեւ «կը զարմանամ, կըսէր, թէ ամերիկացիք ինչպէս ժամանակ կը գտնեն մեռնելու»։ Կիպլինգ ալ ամերիկացիներու կեանքը երկաթուղւոյ կայարանը կառախումբի սպասողներու կը նմանցնէ, ամենը կարաօրան, հոս ու հոն կը վազեն։ Պատկերը շատ ճիշդ է. ովկիանոսի այս եզերքը հանգիստ չը կայ, մանաւանդ օտարականներու համար։ Բոկը՝ արուեստներու եւ քաղաքակրթութեան ծագումին համար անհրաժեշտ կը գտնէ անգործ դասակարգի մը գոյութիւնը, այսինքն խումբ մը մարդոց, որ ֆիզիքական աշխատանքի պէտք չունին ապրելու համար. այդ մարդոց միտքն էր, որ առաջին անգամ խորհիլ սկսաւ։ Մեր ազգային գործերու համար պիտի կրնանք հոս գտնել մարդիկ, որ օրուան հացը ճարելու համար գոնէ 10—15 ժամ աշխատելու դառն հարկին մէջ չեն։ Ունինք կարգ մը բժիշկներ, մտաւոր պաշարի տէր մարդիկ, սակայն, հազուագիւտ բացառութեամբ, իրենց մարդասիրութենէն անդին ուրիշ բանի վրա չեն մտածեր։ Կան շատ մը վաճառականներ, որոնք ժամանակ ու կարողութիւն ունին հանրային գործին ծառայելու առանց ծանր վնասներ կրելու. ոմանք հայոց երեսը անգամ տեսնել չեն ուզեր, ոմանք ալ լաւ է, որ չը տեսնեն, որովհետեւ տեսած մարդիկնին խաբել պիտի ջանան. եկեղեցիի մը շինութեան համար եպիսկոպոսին ափը քանի մը դօլար կարելի է նետեն, բայց լուրջ աշխատութիւն մը ձեռնարկել, այդ հայիւէ դուրս է։

Ո՞վ ուրեմն պիտի յանձն առնէ հասարակութեան համար աշխատիլ, հազար ու մի դժուարութիւններ կրել, քննադատութեան, նախատինքի ենթարկուիլ։ Կան կարգ մը մարդիկ, դժբաղդաբար, կամ չափէն աւելի փառասէր կամ ամբողջովին անընդունակ։ Աղքատ գործաւոր երիտասարդներու մէջ տեսած եմ թանդագին ոյժեր, անձնուիրութեան եւ եռանդուն ջանքի անման օրինակներ։ Ի՞նչ լաւ էր, որ այդ մարդիկ կրթված, զարգացած ըլլային, սակայն դիտելով զարգացածները՝ մարդ կը փորձվի կարծել, թէ կրթութիւնը անբարոյացուցիչ ազդեցութիւն միայն կրնայ գործել հայերու վրա։

Կարդալով «Մշակի» մէջ Հ. Առաքելեանի կոչը Պարսկաստանի հայերուն համար աշխատողներ գտնելու, շատ մօտ կը գտնեմ մեր դրութիւնը մեր հեռաւոր հայրենակիցներու վիճակին։ Հոս ալ մարդու սով, անձնուէր եւ աշխատող մարդ գտնելու համար Դիոգենէսի լապտերին տեղ Էդիսընի ելեքտրիկ լոյսն ալ վառես՝ դեռ անօգուտ է։

Հարցուցի մը կուգայ գրչիս ծայրը,—ինչ կընեն ժողովրդին փողով ապրող անհամար վարդապետներն ու պատուելիները, ինչու չեն աշխատեր այդ տեսակ նպատակներուն համար։ Եպիսկոպոսը ջոջերու այցելելով զբաղած է, միւսները իրարու հետ կը կռուին։ Երախտապարտ պէտք է մնան Ամերիկայի հայոց համաժողովին համար աշխատողները, եթէ այդ կրօնաւորները միայն անտարբերութեամբ գոհանան, եթէ ուրիշ խոչընդոտներ չը յարուցանեն։

Կը տեսնուի, թէ գործը կրկին պիտի ծաներանայ հասարակ ժողովրդին եւ հաղուագիւտ բացառութիւն կազմող զարգացած անհատներու վրա, իսկ թէ այդ տկար ոյժերով ինչպէս կարելի է Հերկուլէսեան աշխատանքի սկսել, այդ իմ հասկացողութենէս վեր է։

Ամերիկայի հայոց մասնաժողովին ի սրտանց ամեն յաջողութիւն փափաքելով հանդերձ, չեմ կրնար հաւատալ, թէ ներկայ ուժերը բաւական պիտի ըլլան չոչափելի արդիւնք մը յառաջ բերելու. men before measures (օրէնքներէ առաջ մարդիկ) ասացուածը վախենամ թէ ամենէն անյաղթելի խոչընդոտը հանդիսանայ։ Ամենէն գեղեցիկ կանոնադրութիւնն ալ անօգուտ կը մնայ թիւրքական օրէնքներու նման, եթէ զայն գործադրելու կարող մարդիկ, աշխատութեան ընդունակ եւ յօժար անհատներ չը կըրնանք գտնել։ Իմ այս դիտողութեանս՝ «գործը պիտի ստեղծէ մարդիկը» պատասխանեց յանձնախմբի անդամներէն մէկը, եւ կարելի է որ ես եմ սխալողը. թերեւս աշխատութիւնը ծնի այն առաջնորդները, որոնց կը սպասենք այսքան տարիներէ ի վեր։

Երբեմն քարերն ալ Աբրահամու որդիներ կը ծնեն, եթէ Աստուած այնպէս ուզէ։

Արմէն

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Էրզրում, յուլիսի 26-ին

Քաղաքս եւ շրջակայ գիւղերը ոչ մի մխիթարական երեւոյթ չունեն։ Թէեւ այս տարի հունձը լաւ, բերքը առատ եւ հացը աժան է, բայց չքաւորութիւն, անգործնէութիւն՝ չափազանց. միայն կրթական գործը քիչ թէ շատ մխիթարական է։

Ամառս մէջ ազգային երկսեռ դպրոցներուն քննութիւնները վերջացան. աշակերտուհիներուն ձեռագործները վիճակահանութեան դրուեցան. իւրաքանչիւր տոմսը արժէր 10 դուրուշ—մէկ ռուբլի. շատ արդիւնք չունեցաւ։

Կիւրակէ օրը եկեղեցին շատ բազմութիւն կար. կային Երզնկայի, Զարսանճակի ու քաղաքիս տեղապահ վարդապետները։ Երզնկայի առաջնորդը պատարագեց, քարոզ խօսեց, ուսուցիչներ, աշակերտուհի, աշակերտ՝ ճառեր արտասանեցին, եօթը աշակերտուհի եւ վեց աշակերտ վկայագիր առին։

Ամսիս 12-ին ալ Կարմիր-Վանքը լեցուն էր ժողովրդով։ Առաջնորդը պատարագեց, յետ պատարագին որբանոցի մէջ որբերը երգեցին, կարդացին ուղերձներ բարերարներուն։ Տեղապահ հայրը մի քանի խօսքեր ուղղելով որբերուն եւ ներկաներուն «պահպանիչով» մը փակեց հանդէսը. ժողովուրդը կէս մը ուրախ կէս մը տրտում հեռացաւ։

Սոյն որբանոցը ունի 120 որբ, մի տեսուչ, երկու ուսուցիչ եւ մի հոգաբարձութիւն. նախագահն է տեղապահ հայրը. գործադիր անդամ՝ մի քահանայ, երկու աշխարհական։ Տեղապահը վանքը գալուն որբերը կը վազեն առաջ, կը դիմաւորեն. հօր նման կը գուրգուրայ եւ կը սիրէ անոնց։

Քաղաքս աղջիկ որբեր ալ շատ կան անտէրունչ. անոնց արցունքները սրբող պիտի լինի։

Էրզրումցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պալէրմոյում հրատարակվող «Ora» լրագրում տպագրված է մի հատուած Կրիսպիի յիշատակարանից, որի մէջ իտալական պետական նշանաւոր գործիչը յայտնում է իր կարծիքը Բիսմարկի մասին։ Ցայտնի է, որ Կրիսպի շատ մօտ յարաբերութեան մէջ էր «երկաթի կանցլերի հետ» եւ շատ առիթներ ունէր մօտիկից դիտելու եւ ճիշտ գաղափար կազմելու նրա մասին։ «Բիսմարկի բնաւորութեան մէջ,—գրում է, ի միջի այլոց Կրիսպի,—ես ամենից աւելի գնահատում էի նրա ազնուութիւնը։ Եթէ նա որ եւ է բան ասում էր, պէտք էր հաստատ հաւատացած լինել, որ նա ուղիղ է ասում։ Նա ատում էր սուտն ու խաբէութիւնը։ Նա հեռու էր Տալեյրանի եւ Մետտէրնիխի մեթոդից. Տարտիւֆի խաբէաբերութիւնը եւ Լոյոլայի կեղծութիւնը զզուանք էին յարուցանում նրա մէջ։ Նա այն կարծիքին էր, որ քաղաքականութեան մէջ կարելի է լռել, բայց չը պէտք է սուտ խօսել։ Նա ասում էր, թէ ի զուր ֆրանսիացիները չէին հաւատում նրա խօսքերին եւ գործում էին այնպէս, որ կարծես նա հակառակը ասելիս լինէր։ Ես միշտ հաւատում էի Բիսմարկի ազնուութեանը եւ երբէք դրա համար չեմ պատժվել»։

—«Daily Mail» լրագրի Բրիւսէլի թղթակիցը հաղորդում է, թէ Բօտա հրամայել է բօէրական զօրաբաժինների հրամանատարներին այսուհետեւ չարձակել այն անգլիացիներին, որոնք գերի կընկնեն բօէրների ձեռքը եւ պահել նրանց իբրեւ պատանդներ այն դէպքում, եթէ կիրառեն սկսէ իրագործել իր վերջին պրոկլամացիայի մէջ եղած սպառնալիքները։

—Ցունական «Աստի» լրագիրը ասում է, որ Աթէնքի ամբողջ մամուլը չէ կարողանում բացատրել, թէ ինչ հանգամանքների դրդմամբ մեծ պետութիւններից մի քանիսը կենտրօնացնում են իրանց ահարկու նաւատորմիղները Էգէյեան ծովում։ Անգլիական 17 զինուորական նաւեր, Զօն Ֆիշերի հրամանատարութեան տակ, այժմ շրջում են յունական ջրերում եւ, նայելով հեռագրական տեղեկութիւններին, նոյն ջրերն ուղեւորվել են նաեւ ֆրանսիական եւ ռուսական զինուորական նաւերը։ Հասարակական կարծիքը Ցունաստանում ասստիկ չփոթված է օտարերկրեայ արմադայի երեւալուց յունական ջրերում հէնց այն ժամանակ, երբ «պաշտօնական լրագրում» նոր միայն հրատարակված էր յունական ծովային մինիստրութեան վճիռը՝ մի թուղթիկ նաւատորմ ուղարկել, փոխ-ծովապետ Զօտօսի հրամանատարութեամբ, շրջելու Էգէյեան ծովում եւ այցելելու Ս. Աթոնի, Սալոնիկի եւ Զմիւռնիայի նաւահանգիստները։

—«Al Moayad» եգիպտական լրագրին գրում են Ադէնից, թէ թէպտեւ անգլիական լրագիրները վաղուց վերջացած հրատարակեցին ապատամբութիւնը Սօմալում եւ «խելագար մոլլայի» ու ապատամբութեան միւս պարագլուխների զօրքերը ցրված, բայց հաստատապէս յայտնի է, որ երկու-երեք ամիս անընդհատ աշխատելուց յետոյ՝ անգլիացիները չը հասան ոչ մի հետեւանքի, այլ կանգնած մնացին մի եւ նոյն տեղում, որտեղից սկսել էին իրանց պատերազմական գործողութիւնները։ Լոնդոնի լրագիրների թղթակիցների հաղորդած տեղեկութիւնները «վճռական կռիւ» եւ սօմալցիների «վերջնական պարտութեան մասին» ոչ այլ ինչ են են, եթէ ոչ խաբէութիւններ։ Ադէնում ստացված տեղեկութիւններով՝ յիշված կռիւ մէջ սպանվել են 45 եւ վիրաւորվել են 70 անգլիացիներ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 օգոստոսի

ՊԵՏԵՐՀՕՑ։ Ժամանեց Նորին Բարձրութիւն Գրինց Պեսար Ալէքսանդրովիչ Դուքս Օլդենբուրգեան իր Օգոստափառ Ամուսնու հետ։

Կ. ՊՕԼԻՍ։ Դիւանագիտական եւ պաշտօնական շրջանները վճռական կերպով հերքում են այն լուրը, իբր թէ Բ. Դուռը առաջարկել է իր դեսպաններին օտարազգի մինիստրութիւնների հետ բանակցութիւններ վարել Թիւրքիայում եղած եւրոպական պօստերը վերացնելու մասին։

ԿՕՐՆԷՑՆԷՑ։ Կայսերական կանցլերը վերադարձաւ Բերլինից եւ այստեղից ուղեւորվեց Դանցիգ այնտեղ տեղի ունենալիք Կայսերական տեսակցութեան ներկայ լինելու։

ԲԵՐԼԻՆ։ Հայահատիկների եւ ապահովագրական գրասենեակի տէր Լուի Շտարհարդտ գնդակահար արեց ինքն իրան ընտանեկան հանգամանքների՝ եւ հայահատիկների առեւտրի անկման ու նրա մէջ ունեցած կորուստների պատճառով։—Հայահատիկների՝ Իլիոս Միխայէլիս կրտսեր առեւտրատունը դժուարանում է վճարումները անել, որովհետեւ կորուստներ է ունեցել գարու եւ եգիպտացորենի սպէկուլացիաներում։ Պասսիվը շատ էլ ընդարձակ չէ։ Այդ դէպքը մեծ նշանակութիւն չունի այստեղի գործերի համար։

ՊԱՐԻԶ։ Ժիրօնդեան դէպարտամէնտի ընդհանուր խորհրդարանը դիմեց ֆրանսիական կառավարութեան, խնդրելով օգտվել Ռուսաց Կայսերական Զոյգի գալստեան մեծ դէպքից խնդրելու, որ ռուսաց կառավարութիւնը իջեցնի գինու մաքսահարկը։ Մի թերթ, որի կիսապաշտօնական կապերը յայտնի են, պաշտպանում է այդ խնդիրը, յայտնելով, որ դեռ

երբէք այսպիսի յարմար առիթ չէ եղել երկու երկիրներին իրապէս ցոյց տալու, որ նրանք պատրաստ են փոխադարձաբար նոյնպիսի աջակցութիւն ցոյց տալ տնտեսական գործերում, ինչպէս եւ քաղաքական հարցերում։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Լուրերին նայելով, Գէրցոգի եւ Լատէգանի զօրագունդները յետ են մղված Օրանժեան հանրապետութիւնը։ Տրանսվաալեան արեւելեան երկաթուղային գիծը աւերել են բօէրները Ալէկմարի մօտ, մօտաւորապէս Միդդելբուրգի եւ Կօմատիպօրտի ճանապարհի մէջտեղում, որից յետոյ բօէրները յարձակում են գործել երկաթուղու գնացքի վրա, որ սակայն ազատվել է։

Կապի գաղութից հաղորդում են, թէ բօէրները Բարկլիատի շրջանից Բարկլեան կիրճով Էլլիոտի մօտակայքում անցան կալու, ուր գտնվում են ընիկներին յատկացրած տեղերը։ Ապա, հաղորդում են, թէ այժմ վճռված է պատերազմը շարունակող բոլոր բօէրների ընտանիքները քշել դէպի ծովափը, ուր բանակներ են սարքվելու փախստականների համար։ Եթէ այդ միջոցը ձեռք առնվի, երկաթուղին երեւի հնարաւորութիւն կը տանայ բաւականաչափ մթերքներ կրելու, որպէս զի Իոհաննէսբուրգը հայթայթվի նոյն քանակութեամբ ուտելեղէններով, որքան հայթայթվում էր պատերազմից առաջ։ Ուստի հաւանական է, որ քաղաքը նորից մտնի իր նօրմալ դրութեան մէջ։

ՎԱԼԼԱԽԵԱՆ ՄԵՍԵՐԻՋ։ Երէկ տեղի ունեցաւ Աուստէրլիցի կուռվ ընկած զինուորների յուշարձանի օծումը։ Ներկայ էին կառավարութեան ներկայացուցիչները, պետական պաշտպանութեան եւ զինուորական մինիստրները, ռուսաց դեսպան կոմս Կապնիստ, դեսպանութեան խորհրդական բարօն Շիլլինգ, փոխգնդապետ Պոտապով, մի քանի պատգամաւորներ եւ ուրիշներ։ Ցիշաճառեր արտասանելու ժամանակ նուագախումբը կատարեց ռուսաց եւ աւստրիական օրհներգները։ Այնուհետեւ տրված հացկերոյթի ժամանակ յուշարձանի կանգնեցման յանձնաժողովի նախագահը արտասանեց ոգեւորութեամբ ընդունված կենաց ճառ աւստրիական կայսրի պատուին, իսկ կոմս Ռուդոլֆ Կինսկիյ՝ Ռուսաց կայսրի պատուին։ Փոխգնդապետ Պոտապով շնորհակալութիւն յայտնեց։ Աւստրիական կայսրին հեռագիր ուղարկվեց յարգալից զգացմունքների արտայայտութեամբ։ Կէսօրից յետոյ տեղի ունեցաւ ժողովրդական տօնախմբութիւն, որ շատ կենդանի անցաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փոքր թատրոնի շէնքը ապահովագրված է փոխադարձ ընկերութեան մէջ 235,000 բուբլով։ Շէնքի վնասը յայտարարված է 600,000. Թատրոնակն այրված գոյքը, որ չէր ապահովագրված, գնահատվում է 800,000 բուբլի։ Հրդեհի պատճառը վերագրում են նրան, որ բանուորները անզգոյշ են վերաբերվել կրակին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ։ Գաբրիէլ Սեւակեանց։ Հասցէն պարզ գրեցէք. հաղորդեցէք նոյնպէս, թէ առաջ որտեղ էիք ստանում „Մշակ“։

ԲՕՍՏՕՎ։ Նիկ. Զաքարեանց։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկի մարկա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Դզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթաւ հ.
Բ. Ի. Դզելիեվ—7—8 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիսակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Հրաւիրվում է Օդեսայի հայոց եկեղեցական-ծխական երեք բաժանմունքով միդասեայ դպրոցի համար, աւանդելու ռուսաց ու հայոց լեզուները, նաեւ թուաբանութիւն ու վայելչագրութիւն։ Աւարտողները պէտք է պատրաստված լինեն միջնակարգ պետական ուսումնարանները մտնելու։

Ցանկացողները պէտք է ներկայացնեն ուսուցչական ցէնզ նաեւ վկայական, վարչութիւնից իրանց գործունէութեան մասին այս ապարէզում։

Վարձատրութիւն՝ 720 բուբլի տարեկան եւ մի սենեակ վառելիքով։

Առաջարկութիւնները ուղղել հետեւեալ հասցէով—Одесса, ктитору армянской церкви Сиракану Исааковичу Асватурову.

Մամուլի տակից դուրս եկաւ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՈՒԽՏԻ

Թարմարեցրած

ԱՐՔՈՒՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դիմել կարելի է՝ Тифлисъ, священнику С. Саакянцъ եւ Центральная Книжная Торговля.

1—5 Սահակ քահանայ Սահակեան

ՄՇԵՑԻ ԱԻԵՏԻՔ ՍԱՓԱՐԵԱՆՑԻ ԱՄՈՒՍԻՆԸ

խնդրում է բարերար անձանց՝ վերցնելու իր 5 տարեկան արու զաւակը որդեգրութեան։

Ցանկացողը պէտք է դիմէ հետեւեալ հասցէով. Մարիինսկայա փողոց, № 20։ Այրի Նա Սափարեանց։ 1—3

ԶՈՒԽԱՃԵԱՆ

ընդունում է աշակերտուհիներ կար ու ձեւի եւ եւրոպական ձեռագործների համար, սեպտեմբերի 1-ից։

Վելիամինովսկայա փողոց, № 14, տուն Եղիազարովի։ (կ. հ.) 2—8

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի եւ առամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական առամներ, քիթ, քիմք (обураторъ) եւ վերին ու ստորին անդամահատված ծնօտների պրօթեզներ (резекціонные протезы).

Առաւօտեան 8—2 ժամ.
Երեկոյեան 5—8 »

Հասցէն՝ Պուշկինսկայա փողոց, № 16։ 23—25

Մ. Տ. ՎԱՍԻԼԻԵՎԻ

ԶՈՒԹԱԿԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԿՈՒՐՍԵՐ

Պարապմունքները սկսվում են սեպտեմբերի 1-ից։ Վարձը ամբողջ ուսումնական տարվայ համար—80 բուբլի. վճարը կիսամեակներով։ Ընդունելութիւնը ամենայն օր, ժամի 10-ից մինչեւ 5-ը եւ 5-ից մինչեւ 7-ը։ Грибоѣдовская, № 5։ 3—11

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՖԻՖԼԻՍԻՆ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱՊԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բազում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 66—100

Օգոստոսի 27-ից սկսվում է աշակերտուհիների ընդունելութիւն

ՕՐ. Մ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Կուրսն է երկու տարի եւ անցնվում է Վօրտի մեթօդով։

Պարապմունքները կը սկսվեն երկուշաբթի, սեպտեմբերի 3-ից։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ վերոյիշեալ օրից ամեն օր, ժամը 11-ից մինչեւ 2-ը։

Հասցէն՝ Уголъ Мухранской и Анчисхатской улицъ, домъ Мухранскаго. 1—2

Սեպտեմբերի 1-ից բացվում է Թիֆլիսում

ՅՈՎ. ՄԻՔ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆԸ

Երեխաները (տղաներ) ընդունվում են որպէս երթեւեկ, կիսապանսիօնէր եւ պանսիօնէր՝ որպէս զի պատրաստվեն մտնելու լոլոր միջնակարգ ուսումնարանների ստորին դասարանները։ Ընդունելութիւնը օգոստոսի 27-ից։ Վօզնեսենսկայա փողոց, տուն Քափանակովի, № 4։ 1—3

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ VI ՇՐՋԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ՇԻՐԱԶԵԱՆԻ

Ուսուցանում եւ պատրաստում է 4 ամսվայ ընթացքում

Պարապմունքի առարկաներն են.—1) Կրկնախտալական հաշուապահութիւն։ 2) Առեւտրական թուաբանութիւն։ 3) Թուաբանութիւն հատրիչի վրա։ 4) Բանկային հաշուապահութիւն ըստ ամենայն ճիւղերի։ 5) Առեւտրական նամակագրութիւն։

Պարապմունքները սկվելու են 10-ին սեպտեմբերի, 1901 թ։ Կարելի է տեսնել ժամի 4-ից մինչեւ 8-ը երեկոյեան։ Հասցէն. անկիւն էիզարխի հրապարակի եւ Ակիմովսկի փողոցի, տ. իշխ. Շերվաշիձէ № 14։ (չ. շ.) 1—6

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

Սրանով պատիւ ունի տեղեկացնել պ.պ. բաժնետէրերին, որ նա հնարաւոր է գտել 20% վճարը պակասեցնել մինչեւ 15%-ը. այսինքն փոխանակ 50 բուբլու իւրաքանչիւր փայի համար ընդունում է 37 ր. 50 կոպ.։ 1—1

ТИПО-ЛИТОГРАФІЯ

„ПУШКИНСКАЯ СКОРОПЕЧАТНЯ“

„ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ“ ՏՊԱՐԱՆ

(Նոր բացված հայկական տպարան)

Ընդունում է ամեն տեսակ եւ ամեն լեզուներով պատուէրներ։ Ունենք եւ մեծ քանակութեամբ հայերէն նոր ձեւի տառեր, որոնցով տպագրվում են զանազան գրքեր եւ ի միջի այլոց բժ. Բուդուղեանի բրոշիւրները։ Տպագրութեան մաքրութեան վրա առանձին ուշադրութիւն է դարձնվում։ Գները չափաւոր եւ մատչելի։ Պատուէրները ընդունվում են հետեւեալ հասցէով. С. Петербургъ, Лештуковъ, 4.

2—5 Տպարանի կառավարիչ՝ Տ. ԳԵՂԱՄԵԱՆ

Պատիւ ունեմ յայտնելու յարգելի հասարակութեան եւ վաճառականներին,

որ այս տարի ստացել ենք մեծ քանակութեամբ

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԷ ԿԱԼՕՇՆԵՐ

ամեն տեսակ, տղամարդկանց, կանանց եւ երեխաների։ Ուստի խնդրում եմ յարգելի առնողներին դիմել մեզ, ուր կը ստանան նոր ապրանք։ Մեծ քանակութեամբ գնողներին կը լինի բաւական զիջում։ Նոյնպէս ստացել ենք ՊՐՕՎՕԴՆԻԿ կոչված ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակի։ Պատուէրները կը կատարվեն անմիջապէս, նայած պայմաններին։ Մեզ մօտ ծախվում են նոյնպէս կօշիկները փափկացնող իւղեր եւ փայլ տուող գունաւոր գլաղուրներ։ Նոյնպէս ծախվում են արտասահմանի եւ Ռուսաստանի ամեն տեսակ կաշուեղէն ապրանքներ եւ կօշկակարական ամեն տեսակ գործիքներ։

Մեր հասցէն. Тифлисъ, Армянскій базаръ, Братья Яргуловы.
Բաժանմունքը. Баку, Губернская ул., Т. Яргулянцъ.
(չ. շ.) 2—20

ՄԱՍՆԱՒՈՐ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ

ՅԱԿ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ ԲԱԳԻՈՒՄ

(Զադրօվի փողոց, տ. Ալիեվի)

Աշակերտների ընդունելութիւնը փոքր եւ մեծ պատրաստական եւ I դասարաններում կը սկսվի օգոստոսի 20-ից։ Նախակրթարան մտնում են առանց քննութեան։ Խնդիրքներ եւ դօկումենտներ ընդունվում են ամեն օր, 9—12 ժամը։ Ուսումը սկսվում է սեպտեմբերի 3-ից։ 4—12

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հատրիչի վրա, 5) Առեւտրական Թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակ կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, և երեկոյեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Մովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. տ.) 19—25

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Августа 1901 г.

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.